ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՈՒ ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի երկրորդ եռամսյակային զեկույց*

(ապրիլ – հունիս, 2010 թ.)

2010 թվականից սկսած Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ներկայացնում է Հայաստանում խոսքի ազատության վիճակի մասին եռամսյակային միջանկյալ զեկույցներ, ընդգրկելով՝

1. Խոսքի եւ մամուլի ազատությանը վերաբերող օրենսդրությունն ու դրանում կատարվող փոփոխություններն ու գործընթացները,
2. Տնտեսական միջավայրն ու դրա ազդեցությունները ԶԼՄ-ների վրա,
3. Քաղաքական միջավայրն ու դրա ազդեցությունները ԶԼՄ-ների վրա,
4. Լրատվամիջոցների եւ լրագրողների իրավունքների խախտումները:

Առաջին եռամսյակային զեկույցը ներկայացվել է ս.թ. ապրիլի 8-ին:

Սույն զեկույցն ընդգրկում է 2010 թվականի ապրիլ-հունիս ամիսները:

1. Խոսքի եւ մամուլի ազատությանը վերաբերող օրենսդրությունը

2010 թվականի երկրորդ եռամսյակում, ինչպես եւ հունվար-մարտ ամիսների ընթացքում, խոսքի եւ մամուլի ազատությանն առնչվող օրենսդրական նախաձեռնությունների պակաս չէր զգացվում:

Մայիսի 18-ին Ազգային ժողովն ընդունեց օրինագծերի մի փաթեթ, որը ներառում էր «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերի հեղինակները կոալիցիոն երեք կուսակցությունների ներկայացուցիչներ էին՝ Հովհաննես Սահակյան (ՀՀԿ), Հովհաննես Մարգարյան (ՕԵԿ), Ռուբեն Գեւորգյան (ԲՀԿ): Այս օրինագծերով նախատեսվում էր զրպարտության եւ վիրավորանքի ապաքրեականացում, այսինքն՝ այդ օրինախախտումները Քրեական օրենսգրքի կարգավորման դաշտից տեղափոխվում էին Քաղաքացիական օրենսգրքի կարգավորման դաշտ: Փաթեթում հիմնականը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքն էր: Առաջին ընթերցումից (2010 թ. մարտի 18-ին, տես՝ ԽԱՊԿ առաջին եռամսյակային զեկույցը) հետո ՀՀ ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպեց խորհրդարանական լսումներ: Այնուհետեւ ձեւավորվեց աշխատանքային խումբ՝ նախագիծը լրամշակելու համար: Թեպետ լրամշակումից հետո շատ մտահոգություններ փարատվել են, սակայն որոշ

* Զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի եւ Նիդեռլանդների Թագավորության կառավարության աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում:

փորձագետների կարծիքով քանի դեռ Քրեական օրենսգրքում մնում է 333-րդ («Սուտ մատնությունը») հոդվածը, որի ձեւակերպումները քիչ են տարբերվում զրպարտությունից, ապա միշտ կա լրատվամիջոցներին քրեական պատասխանատվության ենթարկելու վտանգը:

Առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծում «Վիրավորանք» ձեւակերպման մեջ կար մի վտանգավոր դրույթ, որով վիրավորանք էր համարվում նաեւ կարծիքը կամ գնահատող դատողությունը: Ընդունված օրենքում, ԽԱՊԿ փորձագետների առաջարկությամբ, այն հանվել է, նաեւ ավելացվել է հետեւյալը. «Սույն հոդվածի իմաստով հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա կամ այն պայմանավորված է գերակշռող հանրային շահով»: Երկրորդ ընթերցման ներկայացված եւ ընդունված նախագծի ձեռքբերումներից է այն, որ (դարձյալ ԶԼՄ փորձագետների պնդմամբ) ներառնվեց զրպարտության եւ վիրավորանքի համար պատասխանատվությունից ազատելու դեպքերի վերաբերյալ դրույթը. վերջինս համապատասխանեցվեց «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքին: Այդ ձեւակերպումն է՝ «Տեղեկություն հրապարակային ներկայացնողն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե դա լրատվական գործակալության տարածած նյութի, այլ անձի հրապարակային ելույթի, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, եւ դա տարածելիս հղում է կատարվել աղբյուրին»: Ավելացվել է եւս մի կարեւոր կետ, ըստ որի՝ անձը զրկվում է զրպարտության եւ վիրավորանքի համար սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով պահանջել է իրականացնել հերքում, եւ հրապարակել պատասխան եւ զանգվածային լրատվության միջոցը կատարել է այդ պահանջը: Այսպիսով, տարեսկզբին բուռն քննադատությունների արժանացած օրինագծերի փաթեթն այս տեսքով համարվում է բավականին դրական: Մտահոգությունները կապված են դատական համակարգի անկատարության, այսինքն՝ օրենքի պրակտիկ կիրառման հետ:

Հունիսի 10-ին հրավիրվեց ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստ, որում երկրորդ ընթերցմամբ ու ամբողջությամբ ընդունվեց «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Այս օրինագիծը մշակել էր ՀՀ տարածքում ռադիոհեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովը: Մայիսի 13-ին ՀՀ կառավարությունը հավանություն էր տվել նախագծին, ապա եւ այն համարել անհետաձգելի: Նախագիծը կառավարության, միջգերատեսչական հանձնաժողովի ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների եւ ԶԼՄ փորձագետների մասնակցությամբ քննարկվեց մայիսի 14-ին «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կազմակերպած «կլոր սեղանի», ինչպես նաեւ՝ մայիսի 18-ին ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի կազմակերպած սեմինարի ժամանակ: Ի դեպ՝ վերջինիս ընթացքում ներկայացվեցին նաեւ օրինագծի վերաբերյալ ԵԱՀԿ փորձագետների եզրակացությունները: Առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովը մայիսի 26-ին կազմակերպեց նախագծի խորհրդարանական լսումներ, որի ժամանակ ելույթներ ունեցան ինչպես հեղինակները՝ միջգերատեսչական հանձնաժողովի անդամները, այնպես էլ պատգամավորներ, լրագրողական ՀԿ-ների ղեկավարներ եւ փորձագետներ, միջազգային

կազմակերպությունների ներկայացուցիչներ: Լսումներից հետո միջգերատեսչական հանձնաժողովը ձեռնամուխ եղավ առաջարկների քննարկմանը: Հունիսի 3-ին քննարկում կազմակերպվեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, իսկ երկրորդ ընթերցման նախագիծը ներկայացվեց արդեն հունիսի 7-ից 10-ի քառօրյա նիստերում: Թվում էր, թե այսքան քննարկումներից հետո նախագծի հեղինակները կանսան հասարակության եւ միջազգային կազմակերպությունների ձայնին եւ որոշակի փոփոխություններ կկատարեն նախագծում: Սակայն կատարվեցին միայն աննշան խմբագրական փոփոխություններ, իսկ սկզբունքային հարցերում՝ ոչ մի զիջում: Օրինագծի վերաբերյալ իրենց դիրքորոշումը Հայաստանի լրագրողական կազմակերպությունները (դրանց թվում նաեւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն) արտահայտել էին մի քանի հայտարարություններով: Մասնավորապես՝ երկրորդ ընթերցումից առաջ այդ ՀԿ-ներն առաջարկում էին՝ «ՀՀ ԱԺ-ին երկրորդ ընթերցման ներկայացնելուց առաջ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում թողնել միայն այն դրույթները, որոնք անմիջականորեն առնչվում են հեռարձակման թվայնացմանը եւ հնարավորություն են տալիս 2010 թվականի հուլիսի 20-ին հայտարարել եւ կազմակերպել պետական շահագործման մուլտիպլեքսներով հեռարձակվելու լիցենզավորման մրցույթներ, իսկ մնացած բոլոր փոփոխությունները եւ լրացումները, որոնք ուղղակիորեն չեն առնչվում թվայնացմանը եւ մրցույթներին, հանել նախագծից, հրապարակել հեռարձակման հաճախականությունների աուդիտի արդյունքները, որով կհիմնավորվեր, թե ինչու է նախատեսվում պետական շահագործման մուլտիպլեքսների ցանցում ընդամենը 18 հաճախականություններով հեռարձակման լիցենզավորում, նախատեսել դրույթ՝ արբանյակային հեռարձակման վերաբերյալ, այն հաշվով, որ այդպիսի հեռարձակումը կախված չլինի Հայաստանում եթերային հեռարձակման լիցենզիա ունենալուց, մշակել Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի լրացումներ, որոնցով պատասխան պիտի տրվեն այն բոլոր հարցերին ու մտահոգություններին, որոնք կազմակերպությունները ներկայացրել էին մայիսի 26-ի խորհրդարանական լսումների ժամանակ»: Հայտարարությանը կից ներկայացվեցին օրինագծի վերաբերյալ մեկնաբանություններ եւ առաջարկություններ:

Վստահեցնելով, թե երկրորդ ընթերցումից առաջ նախագծում կմնան միայն թվայնացմանն անմիջականորեն առնչվող դրույթները, օրինագծի հեղինակները փոփոխություններ էին կատարել այդ գործընթացի հետ բնավ կապ չունեցող հոդվածներում: Մասնավորապես, ընդունված օրենքում հանվել է հանրային հեռուստառադիոընկերության գովազդի սահմանափակումը (հաղորդումները գովազդով չընդհատելու պահանջը), իսկ գովազդի ծավալը ընդհանուր հաղորդումների մեջ 5-ից դարձվել է 7 տոկոս: Ավելին՝ երկրորդ ընթերցումից առաջ ներմուծվեց ըստ էության հակասահմանադրական դրույթ. օրենքի նախագծի 35 հոդվածի 1 մասը խմբագրվեց, ինչի արդյունքում Հանրային հեռուստառադիոընկերության գործունեությունը դուրս է մնում որեւէ կարգավորումից եւ վերահսկողությունից: Բացի այդ, պահպանվել են արբանյակային հեռարձակումը Հայաստանի տարածքում եթերային հեռարձակման լիցենզիա ունենալու հետ պայմանավորող դրույթները: Ձեւակերպելով «Լիցենզիան միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել հեռուստառադիոծրագրերի հեռարձակում» (հոդված 46)՝ հեղինակաները, ըստ էության, հիմքեր են ստեղծել արբանյակային եւ ինտերնետային հեռարձակումը չթույլատրելու համար: Այդպես էլ չհրապարկվեցին հեռարձակման հաճախականությունների աուդիտի արդյունքները:

Ինչ վերաբերում է բուն թվայնացմանը եւ լիցենզավորման մրցույթների կազմակերպմանը, ապա սրանք կարգավորող հոդվածներն էլ առանձնապես մեծ փոփոխություններ չէին կրել, եւ դարձյալ մրցույթներում հաղթողներին որոշելը

սուբյեկտիվիզմի հսկայական տարրեր է պարունակելու իր մեջ: Միայն միջազգային կազմակերպությունների ճնշման տակ հեղինակները ներառեցին դրույթ, ըստ որի լիցենզավորված անձի ընտրության դեպքում պետք է պատճառաբանվի եւ հիմնավորվի այդ ընտրությունը:

Այս օրինագծի ընդունումով 2011 թվականից մայրաքաղաքում հեռարձակվող հեռուստաալիքների թիվը 22-ից կրճատվելու է մինչեւ 18-ի, ինչը հարված է հասցնելու հեռուստաեթերի բազմազանությանը: Արդեն ընդունված օրենքը ամրագրում է հեռուստաշուկայում առկա եւ իշխանություններին ձեռնատու կառավարելի եթերի ստատուս քվոն:

Ընդհանրացնելով՝ կարելի է եզրակացնել. եթե զրպարտության ու վիրավորանքի ապաքրեականացման հարցում օրենսդիրը համագործակցեց քաղաքացիական հասարակության հետ՝ ընդունելով հիմնական առաջարկությունները, ապա «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծի շուրջ համագործակցությունն առավելապես իմիտացիոն բնույթ ունեցավ: Իշխանություններն այդպես էլ սկզբունքային հարցերում ոչ մի զիջման չգնացին: Սա վկայում է այն մասին, որ գործող իրշխանությունը չի ցանկանում ազատականացնել հեռարձակման ոլորտը, ավելին՝ ձգտում է այն պահել իր ամբողջական վերահսկողության տակ:

ԽԱՊԿ փորձագետների կարծիքով՝ նման վերահսկողությանն էր միտված նաեւ ՀՀ հանրային խորհրդում մշակված «Հեռուստառադիոհեռարձակողների գործունեության էթիկական սկզբունքների խարտիա» անվանումով փաստաթուղթը՝ ինքնակարգավորման անվան տակ հեռուստաընկերություններին ներկայացնելն ու ապրիլի 21-ին 11 հեռարձակողների կողմից դրա ստորագրումը: Մեր գնահատմամբ՝ սա անհեռանկար եւ ԶԼՄ-ների իրական ինքնակարգավորմանը խանգարող մի գործընթաց է:

2. Տնտեսական պայմանները

ԶԼՄ-ների գործունեության վրա տնտեսական միջավայրի ազդեցությունը գնահատելիս հաշվի են առնվում, մասնավորապես, թե որքանո՞վ են լրատվամիջոցները պատկանում կամ վերահսկվում կառավարության կողմից եւ դա ազդո՞ւմ է, արդյոք, բազմակարծության վրա: Լրատվամիջոցների պատկանելությունը թափանցի՞կ է: Պետությունը կամ այլ սուբյեկտներ վերահսկո՞ւմ են լրատվամիջոցները գովազդի կամ դրամական օժանդակության միջոցով: Լրատվամիջոցների պատկանելությունը կենտրոնացվա՞ծ է, եւ ազդու՞մ է, արդյոք, դա բովանդակության բազմազանության վրա: Երկրի տնտեսական վիճակը սրո՞ւմ է լրատվամիջոցների կախվածությունը պետությունից, կուսակցություններից, մեծ բիզնեսներից կամ այլ ազդեցիկ քաղաքական սուբյեկտներից:

Հիշյալ եւ բաժնին վերաբերող մյուս հարցերի պատասխանները Կոմիտեն կներկայացնի ավելի ուշ, երբ կավարտի արդեն իսկ իրականացվող ամբողջական հետազոտությունը: Իսկ այս զեկույցում մենք «*ԶԼՄ-ների եւ դրանց աշխատակիցների վրա ճնշումներ»* բաժնում ցույց կտանք, թե տնտեսական լծակների օգնությամբ ինչպես է իշխանությունը փորձում ճնշել Գյումրիում գործող «ԳԱԼԱ» հեռուստաընկերությանը:

3. Քաղաքական միջավայրը եւ դրա ազդեցությունը

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն նախորդ զեկույցներում նշել է, որ լրագրողների եւ լրատվամիջոցների իրավունքների խախտումներն ու նրանց նկատմամբ

բռնություններն առավել ակտիվանում են քաղաքական իրավիճակի սրման պայմաններում: Թեպետ 2010 թվականի երկրորդ եռամսյակում ընտրություններ չեն եղել, սակայն քաղաքական որոշակի լարվածություն առաջացավ, երբ ՀԱԿ մի խումբ ակտիվիստներ որոշեցին մայիսի վերջին նստացույց անցկացնել Ազատության հրապարակում: Այդ ընթացքում լրագրողների նկատմամբ ոստիկանության կողմից բռնություններ իրականացվեցին: Հիշյալ դեպքերը ներկայացված են սույն զեկույցի ***«Լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություններ»*** բաժնում:

4. Լրագրողների եւ լրատվամիջոցների իրավունքների խախտումներ

2010 թվականի երկրորդ եռամսյակը, ի տարբերություն 2009-ի ապրիլ-հունիս ամիսների, համեմատաբար հանգիստ էր: Դա բնական է, քանի որ 2009-ի մայիսի 31-ին տեղի էին ունեցել Երեւանի ավագանու ընտրություններ, եւ դրա ընթացքում արձանագրվել էին լրագրողների գործունեության հետ կապված 5 միջադեպեր:

2009 եւ 2010 թվականների երկրորդ եռամսյակներին տեղի ունեցած խախտումների համեմատությունը՝ աղյուսակով

Խախտումների տեսակները / Տարեթիվ	2009 2-րդ եռամսյակ	2010 2-րդ եռամսյակ
Լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություններ	8	3
ԶԼՄ-ների եւ դրանց աշխատակիցների վրա ճնշումներ	1	5
Տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքի խախտումներ	1	5

Լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություններ

2010 թվականի երկրորդ եռամսյակում արձանագրվել են բռնության երեք դեպք եւ նախկինում կատարված երկու բռնության վերաբերյալ նոր զարգացումներ, որոնցից մեկը ներկայացվում է սույն, մյուսը՝ «ԶԼՄ-ների եւ դրանց աշխատակիցների վրա ճնշումներ» բաժնում:

Ապրիլի 1-ին Երեւանի Աբովյան ու Տերյան փողոցների միջեւ գտնվող նախկին Ղուկասյանի անվան այգում կառուցվող սրճարանի մոտ անհայտ անձը խոչընդոտել է «Ազգ» օրաթերթի թղթակցի աշխատանքը: Նա հարձակվել է լրագրողի վրա եւ պարսպի դռան մոտ երկու անգամ հարվածել ուսին ու գլխին, փորձել է ձեռքից խլել լուսանկարչական սարքն ու պայուսակը: Թղթակցին օգնության են հասել ուսանողները: Իսկ լրագրողի գործունեությունը խոչընդոտած անձնավորությունը սպառնացել է. «Քո օրերը չէ, քո ժամերն են հաշված»:

Ապրիլի 30-ին լրացավ «Armenia Today» լրատվական գործակալության համակարգող Արգիշտի Կիվիրյանի դեմ կատարված մահափորձի մեկ տարին: Նույն օրը Արգիշտի Կիվիրյանը մամուլի ասուլիսում ներկայացրեց մահափորձին հաջորդած մեկ տարվա ընթացքում կատարվածը: Գործով կալանավորված են եղել երկու անձիք՝ Վլադիկ Սերոբյանը և Գուրգեն Կիլիկյանը: Կատարվել է առերեսում նշված անձանցից մեկի հետ, ում նա ճանաչել

է: Սակայն ս.թ. մարտի 8-ին նրանք ազատվել են կալանքից: Ըստ Ա. Կիվիրյանի, իր դեմ մահափորձը պատվիրել է Ախալքալաքի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանը, որի գործունեության մասին ինքը բազմիցս սուր հրապարակումներով է հանդես եկել: Ապրիլի 30-ին Ախալքալաքի շրջանի ոստիկանապետը «Հետքին» տված հարցազրույցում հերքել է իր առնչությունը միջադեպին:

Հիշեցնենք, որ 2009 թվականի ապրիլի 30-ի լուսաբացին անհայտ անձինք փայտե մահակներով հարձակվել էին Կիվիրյանի վրա, երբ լրագրողը նույն շենքում տեղակայված իր գրասենյակից տուն էր վերադառնում: Արգիշտի Կիվիրյանը ծանր վիճակում, գլխի եւ մարմնի բազմաթիվ վնասվածքներով տեղափոխվել էր «Էրեբունի» բժշկական կենտրոն: Արգիշտի Կիվիրյանի վրա հարձակման փաստով ոստիկանությունը քրեական գործ էր հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 117 («Դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը») հոդվածով: Հետագայում գործը հանձնվել էր ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության վարույթ, որտեղ այն վերաորակավորվել էր ՀՀ ՔրՕր-ի 34-104 հոդվածով («Սպանության փորձ»):

Մայիսի 31-ին Երեւանի Ազատության հրապարակից ոստիկանները բերման են ենթարկել Հայ ազգային կոնգրեսի ակտիվիստների ակցիան լուսաբանելու նպատակով այդտեղ գտնվող «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Սյուզաննա Պողոսյանին և «Հայք» թերթի լրագրող Լիլիթ Թադևոսյանին: Ըստ Լիլիթ Թադևոսյանի՝ իրենք Ազատության հրապարակում իրականացրել են լրագրողական աշխատանք, դեպքի վայրում ձայնագրություններ են կատարել, իսկ երբ ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանին նստեցրել են ոստիկանական մեքենայի մեջ, լրագրողներին հրելով դուրս են բերել Ազատության հրապարակից: Ոստիկանները լրագրողներին քաշքշել եւ հրել են այն պահին, երբ նրանք աշխատել են՝ ձայնագրություն են կատարել, ինչից հետո նրանց բերման են ենթարկել: Լրագորղներն ազատ են արձակվել 3 ժամ հետո միայն:

Մայիսի 31-ին ոստիկանությունը Երեւանի Ազատության հրապարակի մերձակայքից ուժի կիրառմամբ բերման ենթարկեց, ապա եւ ձերբակալեց «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Անի Գեւորգյանին: Ըստ ոստիկանության հաղորդագրության, լրագրողը մեղադրվում էր ոստիկան Համբարձում Բոքյանին չենթարկվելու եւ «նրա հանդեպ կյանքի համար ոչ վտանգավոր բռնություն կիրառելու՝ դեմքին հարվածելու եւ ցավ պատճառելու համար»: Լրագրողուհու նկատմամբ քրեական գործ հարուցվեց ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ («Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը») հոդվածի 1-ին մասով: Ըստ «Հայկական ժամանակ» թերթի խմբագրակազմի՝ Անիի ձերբակալությունը ՀՀ ոտիկանապես Ալիկ Սարգսյանի անձնական վրեժխնդրության դրսեւորումն է, քանի որ վերջինիս դուր չէին եկել լրագրողի քննադատական հրապարակումները: Հունիսի 1-ին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն եւ գործընկեր կազմակերպությունները հանդես եկան հայտարարությամբ, որում, մասնավորապես, ասվում էր՝ « լրագրողների դեմ կիրառվող նման բռնի մեթոդները անընդունելի են ժողովրդավարական հասարակության համար: Հիշեցնում ենք՝ ըստ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ «Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ», ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ՝ «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը» հոդվածի 2-րդ մասը պատիժներ է նախատեսում պաշտոնատար անձանց կողմից նման արարքներ թույլ տալու համար: Պահանջում ենք ՀՀ ոստիկանության ղեկավարությունից՝ անհապաղ ազատ արձակել «Հայկական ժամանակ» թերթի լրագրող Անի Գեւորգյանին, դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը եւ պատժել իրենց լիազորությունները գերազանցած ոստիկաններին»: Իրենց

անհանգստությունը հայտարարարություններով արտահայտեցին նաեւ մի քանի միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ: Հունիսի 3-ին լրագրողուհուն ազատ արձակեցին՝ որպես խափանման միջոց ընտրելով քաղաքից չբացակայելու ստորագրությունը:

ՁԼՄ-ների եւ դրանց աշխատակիցների վրա ճնշումներ

Ապրիլի 6-ին Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունը հայտարարություն տարածեց այն մասին, որ տեխնիկական վերազինման նպատակով իրենք ներկրել են նոր սարքավորումներ, որոնց մաքսազերծման գործընթացը արհեստականորեն ձգձգվում է: Հեռուստաընկերությունը կատարել է փաստաթղթային իր բոլոր պարտավորությունները, սակայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) Շիրակի տարածքային մաքսատունը ներկրված ապրանքի մաքսազերծման գործընթացը անհիմն կերպով, առանց որեւէ պատճառաբանության կասեցրել է: «ԳԱԼԱ»-ի ղեկավարությունը նամակով դիմել է ՊԵԿ Շիրակի տարածքային մաքսատան պետին: Սակայն ապարդյուն: Ապրիլի 8-ին հեռուստաընկերություն են այցելել ՊԵԿ-ի հարկային ծառայության աշխատակիցները՝ կատարելու ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի հանձնարարականը, ըստ որի՝ «ԳԱԼԱ» ՀԸ հիմնադիր «ՉԱՊ» ՍՊԸ-ին պատկանող գույքի, բանկերում գտնվող հաշվարկային հաշիվների վրա ընդհանուր՝ 822.2 հազ. դրամ չկատարված պարտավորությունների չափով արգելանք է դրվել: Այս պատմությանը միջամտեց նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ նամակով դիմելով ՊԵԿ ղեկավարին: Ապրիլի 8-ին ՊԵԿ-ը տարածեց իր պարզաբանումը, ըստ որի՝ ներկրված ապրանքի մաքսային ձևակերպումների գործընթացը կասեցվել է, քանի որ, Գյումրու տարածքային հարկային տեսչության գրության համաձայն՝ ընկերությունն ունի 822 հազար 803 դրամի չմարված հարկային պարտավորություն: «ԳԱԼԱ»-ն ապօրինի է համարել ՊԵԿ-ի գործելակերպը: Իսկ մայիսի 13-ին արդեն ԴԱՀԿ ծառայության մարզային բաժնի աշխատակիցները այցելեցին «ԳԱԼԱ» հեռուստաընկերություն: Այցելության նպատակը ՀՀ վարչական դատարանի կողմից տրված կատարողական թերթի պահանջի կատարումն էր: «ՉԱՊ» ՍՊԸ-ից առգրավվեց 822.200 դրամ գումար: Այս ամբողջ պատմությունն ավարտվեց նրանով, որ մայիսի 20-ին «ԳԱԼԱ»-ի տեխնիկան վերջապես մաքսատնից հասավ հեռուստաընկերություն: Սա, մեր գնահատմամբ, պետական լծակներն օգտագործելու միջոցով լրատվամիջոցի վրա տնտեսական ճնշում բանեցնելու դրսեւորում է: Ավելացնենք, որ շարունակվում է «ԳԱԼԱ»-ի վրա տնտեսական ճնշումների արդեն փորձված մեթոդը. գովազդատուները խուսափում են գովազդ տեղադրելուց: Ինչպես մայիսի 27-ին ԽԱՊԿ-ին տեղեկացրեց գործադիր տնօրեն Կարինե Հարությունյանը՝ մայիսին ՀԸ-ը ընդամենը մեկ գովազդատու է ունեցել:

Ապրիլի 14-ին հայտնի դարձավ, որ ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Գարիկ Բեգոյանը որոշել է կարճել ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի վրա հարձակված ոստիկանության քննիչ Գագիկ Մարգարյանի նկատմամբ քրեական հետապնդումը, ինչպես նաեւ սուտ մատնության մեղադրանքով քրեական հետապնդում սկսել Շամշյանի դեմ: Հիշեցնենք, որ ս.թ. փետրվարի 24-ի առավոտյան ՀՀ դատախազության շենքի առջեւ բռնարարք էր կատարվել «Առավոտ» եւ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթերի ֆոտոթղթակից Գագիկ Շամշյանի նկատմամբ: Լրագրողը լուսանկարում էր դատախազության կոլեգիայի նիստին մասնակցելու եկող դատախազներին և բարձրաստիճան պաշտոնյաներին: Սակայն մոտ 30-ամյա մի երիտասարդ արգելել էր Շամշյանին լուսանկարել, ապա հայհոյանքներ էր տեղացել նրա հասցեին ու հենց դատախազության շենքի մոտ հարվածել նրան: Գագիկ Շամշյանը վնասվածքներ էր ստացել, նրան ցուցաբերվել էր բժշկական օգնություն: Հետագայում պարզվել էր, որ բռնարարքի

հեղինակը քննիչ Գագիկ Մարգարյանն է, որը գործուղմամբ աշխատում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում: Երբ Գագիկ Շամշյանը Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Գարիկ Բեգոյանից տեղեկացավ, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածի («Սուտ մատնությունը») 2 մասի 2 կետի հատկանիշներով, դիմեց ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին՝ բողոքելով նախաքննության միտումնավորության, քրեական գործի վարույթն անհիմն կարճելու եւ իրեն մեղադրանք ներկայացնելու դեմ: Դրան հետեւեց Երեւան քաղաքի դատախազի տեղակալ Ս. Խաչատրյանի պատասխանը, որում տեղեկացվում էր, թե նշված գործով ընդունված որոշումը «վերացնելու հիմքեր չկան»: Ֆոտոլրագրողը բողոք ներկայացրեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Այդ բողոքի քննությունը նշանակված էր հունիսի 15-ին, սակայն առաջին դատական նիստը հետաձգվեց:

Ապրիլի 16-ին «Հրապարակ» օրաթերթը ստացավ Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձագիտական ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությունը՝ ինտիմ կադրեր պարունակող տեսաերիզի վերաբերյալ, որի «գլխավոր հերոսը», ըստ թերթի հրապարակման, ռեժիսոր Հրաչ Քեշիշյանն է: Փորձագետները չեն կարողացել լիարժեք պատասխանել դատարանի առաջադրած հարցերին՝ պատճառաբանելով, որ թերթի ներկայացրած տեսագրության որակը թույլ չի տալիս դիմանկարային նույնականացում կատարել: Այնուամենայնիվ, փորձագետները ինտիմ կադրերի «հերոսի» եւ Հրաչ Քեշիշյանի միջեւ նմանությունը գնահատել են 30-40 տոկոս: Ապրիլի 30-ի, ապա եւ հունիսի 18-ի դատական նիստերը տարբեր պատճառաբանություններով հետաձգվել են: Այսուհանդերձ, եղել է նաեւ հաշտության համաձայնություն կնքելու առաջարկ, քննարկվել է անգամ դրա տեքստը, սակայն հետագայում հայցվոր կողմը հետ է կանգնել դրանից: Հիշեցնենք, որ տեսագրության մասին պատմող նյութը «Հրապարակ» օրաթերթի 2009 թվականի հուլիսի 18-ի համարում հրապարակվելուց հետո Քեշիշյանը նամակ էր ուղարկել թերթին, որով պահանջել էր հերքել հրապարակված տեղեկությունն այն մասին, թե տեսաերիզում երեւացող տղամարդը հենց ինքն է: «Հրապարակը» տպագրել էր նրա նամակը, սակայն հրապարակած տեղեկությունը չէր հերքել: Քեշիշյանը դիմել էր դատարան՝ թերթից իբրեւ փոխհատուցում պահանջելով 5 միլիոն դրամ:

Մայիսի 24-ին ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության Արմավիրի կայազորի ղեկավար, «Փառապանծ մարտիկներ» կազմակերպության նախագահ Գրիշա Սարգսյանը զանգահարել է «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի խմբագրություն եւ սպառնալիքներ տեղացել: Գրիշա Սարգսյանին զայրացրել էր «ՉԻ» մայիսի 22-ի համարում հրապարակված «Երկրապահի ինադու» հոդվածը, որը վերաբերում էր իր գործունեությանը: Լսափողը վերցրած փոխտնօրեն Մհեր Ղալեչյանին Գրիշա Սարգսյանը հորդորել է փոխանցել «Չորրորդ ինքնիշխանության» լրագրող Թագուհի Թովմասյանին եւ ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանին, որ ինքը պատրաստվում է «պատժել նրանց» եւ որ Թովմասյանին ու Շամշյանին «գլխից խփելու» է: «Փառապանծ մարտիկների» ղեկավար Գրիշա Սարգսյանը նաեւ ընդգծել է իր կարողությունները՝ բղավելով, թե «Մոռացե՞լ եք՝ ես ինչքան մարդ ունեմ, գալու եմ բամբիտ անեմ ձեր խմբագրությունը, դուք դեռ ինձ չգիտեք»: Միջադեպից մի քանի օր անց հայտնի դարձավ, որ Գրիշա Սարգսյանն ազատվել է պաշտոնից, իսկ նրա գործունեության վերաբերյալ ծառայողական քննություն է սկսվել:

Հունիսի 14-ին մաքսային պետական կոմիտեի նախկին ղեկավար Արմեն Ավետիսյանի տան վրա ավազակային հարձակման գործով դատավարության ժամանակ մեղադրյալ Արա Կարապետյանի մերձավորների կողմից ճնշումներ են եղել «Առավոտ» օրաթերթի՝ դատը լուսաբանող թղթակցի նկատմամբ: Իսկ դատական նիստն ավարտվելուց հետո հանցախմբի

անդամների հարազատները սպառնացել են նույն լրագրողին՝ զերծ մնալ հրապարակումներից, քանի դեռ «վատ չի եղել»:

Հունիսի 25-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում վերսկսվեցին Գյումրու քաղաքապետարանի եւ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության հիմնադիր «ՉԱՊ» ՍՊԸ-ի միջեւ քաղաքային հին հեռուստաաշտարակի շահագործման շուրջ վեճի դատական լսումները: Հիշեցնենք, որ այս վեճը սկսվել է դեռեւս 2007 թ. նոյեմբերին: Գյումրիի քաղաքապետարանը ՀՀ տնտեսական դատարան էր դիմել՝ պահանջելով պարտավորեցնել «ՉԱՊ» ՍՊԸ-ին դադարեցնել հեռուստաաշտարակի շահագործումը եւ ապամոնտաժել այնտեղ տեղակայված սարքերը: Հարցը բանակցությունների միջոցով լուծելու հեռուստաընկերության փորձերը ոչնչի չէին հանգեցրել: 2008 թվականի փետրվարի 29-ին դատարանը հարցը վճռել էր հօգուտ քաղաքապետարանի, սակայն 2008 թվականի հոկտեմբերի 31-ին վերաքննիչ դատարանն այդ վճիռը չեղյալ էր հայտարարել եւ գործն ուղարկել էր Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: 2009 թվականի հունվարի 14-ի նիստում Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել էր «ԳԱԼԱ»-ի միջնորդությունը՝ հեռուստաաշտարակի փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ: 2010 թվականի մայիսի 10-ին ՀՀ փորձաքննությունների կենտրոնի մասնագետները եղան տեղում՝ փորձաքննություն անցկացնելու նպատակով: Այսուհանդերձ, 2010 թվականի հունիսի 25-ի նիստում դրա արդյունքները չհրապարակվեցին, նիստը հետաձգվեց մինչեւ հուլիսի 12-ը:

Հունիսի 25-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում սկսվեց Իջեւանի քաղաքապետարանն ընդդեմ «Հետաքննող լրագրողների» գործով դատական նիստը: Հիշեցնենք, որ այս գործով քննությունը սկսվել էր 2008 թվականի սեպտեմբերի 29-ին Երեւանի քաղաքացիական դատարանում: Հայցվորը պահանջում էր հերքել իրենց կարծիքով Իջեւանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող տեղեկությունները՝ հրապարակված «Հետքի»՝ 2008 թվականի մայիսի 5-ի թողարկման «Ու՞մ գրպանն են մտնում ավազահանքի փողերը» (արտատպվել է նաեւ «Ազգ» օրաթերթի 2008 թ. մայիսի 20-ի համարի ներդիրում) եւ 2008 թվականի հունիսի 23-ի թողարկման «Երեք հանձնաժողովները «կտեսնե՞ն» ջրամբարի ավազի անօրինական շահագործումը» հոդվածներում (մանրամասները տես՝ ԽԱՊԿ-ի 2008 եւ 2009 թվականների տարեկան զեկույցներում): Հետագայում, դատական բարեփոխումներից հետո, գործը տեղափոխվեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 2009 թվականի հուլիսի 10-ին հրապարակեց վճիռը՝ մերժելով քաղաքապետարանի հայցը: Սակայն Իջեւանի քաղաքապետարանը բողոք ներկայացրեց վերադաս դատական ատյան, եւ նոյեմբերի 13-ին վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանեց Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը եւ գործը ուղարկեց լրացուցիչ քննության: 2010 թվականի հունիսի 25-ին դատարանն ավարտեց քննությունը, իսկ վճիռը որոշեց հրապարակել հուլիսի 9-ին:

Տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքի խախտումներ

Ապրիլի 16-ին Գեղագիտական դաստիարակության ազգային կենտրոնի փոքր թատրոնի դահլիճում պետք է ցուցադրվեր լրագրող Տիգրան Պասկեւիչյանի սցենարով նկարահանված «Ընտրություն» ֆիլմը: Սակայն նույն օրվա առավոտյան թատրոնի տնօրինությունից տեղեկացրել են, որ ԳԴԱԿ տնօրեն Լեւոն Իգիթյանն արգելել է ֆիլմի ցուցադրումը:

Այնուհետեւ պարզվել է, որ արգելքը դրվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից: Հիշեցնենք, որ սա Պասկեւիչյանի երկրորդ ֆիլմն է, որի ցուցադրությունն արգելվում է: Առաջինի՝ Երեւանի կենտրոնի տարածքների իրացման մասին պատմող «Օտարում» ֆիլմի ցուցադրումը 2008 թվականի հոկտեմբերին մերժել էր «Մոսկվա» կինոթատրոնի ղեկավարությունը:

Ապրիլի 22-ին ՀՀ վճռաբեկ դատարանը հրապարակեց իր որոշումը, որով մասնակիորեն բավարարեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ) բողոքը՝ բեկանելով «ԻԱԿ-ն ընդդեմ Զարթոնքի գյուղապետի եւ գյուղապետարանի» գործով ՀՀ վարչական դատարանի վճիռը: 2009 թվականի օգոստոսի 13-ին ՀՀ վարչական դատարանը հիշյալ գործով վճիռ էր կայացրել՝ որոշելով կարճել գործի վարույթը, քանի որ ԻԱԿ ներկայացուցիչը հրաժարվել էր հայցի երկու պահանջներից, իսկ դատարանն էլ գտել էր, որ գործի վարույթը ենթակա է կարճման նաեւ ԻԱԿ-ի այն պահանջի մասով, որը վերաբերում է Զարթոնքի գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելուն: Հիշյալ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանեց ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի օգոստոսի 13-ի վճիռը եւ գործն ուղարկեց նույն դատարան՝ նոր քննության:

Մայիսի 25-ին ՀՀ վարչական դատարանը (Վանաձորի նստավայր) մերժեց «Առավոտ» օրաթերթի եւ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հայցն ընդդեմ Լոռու մարզպետ Արամ Քոչարյանի: Հիշեցնենք, որ «Առավոտը» 2009թ. օգոստոսի 19-ին էլեկտրոնային հարցում էր ուղարկել մարզպետարան եւ խնդրել տեղեկացնել, թե ինչ նպատակներով են ծախսվել ՀՀ պետական բյուջեից՝ «Այլ նպաստներ բյուջեից» տողով ստացված գումարները: Դատարանի վճռում էլ է նշված, որ մարզպետարանը հարցումը ստացել է, սակայն հին հասցեներով, որոնք այդ պահին մարզպետարանի պաշտոնական հասցեները չէին: Դատարանը ընդունել է նաեւ, որ այդ փոփոխության մասին «Առավոտը» կարող էր տեղյակ չլինել, նա հարցումն ուղարկել էր այն էլեկտրոնային հասցեներով, որոնք այդ պահին տեղադրված էին Լոռու մարզպետարանի lori.region.am կայքում: Դատարանը արձանագրել է նաեւ, որ 19.08.09թ. ուղարկած հարցմանը պատասխան է ստացվել 21.04.2010թ.: Այսինքն՝ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետի փոխարեն՝ հարցումը ստանալուց 245 օր անց: Այսքանից հետո վարչական դատարանը որոշել է, որ հարցմանը չպատասխանելը չի կարող գնահատվել ոչ իրավաչափ: «Առավոտը» եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկացրել են, որ վճիռը բողոքարկելու են վճռաբեկ դատարանում:

Մայիսի 25-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում լատինամերիկյան համերգային շրջագայությունից վերադարձած մի խումբ երգիչների ընդունելությունը լուսաբանելու համար նախարարություն այցելած «Հրապարակի» թղթակից Գայանե Սարիբեկյանին նախարար Հրանուշ Հակոբյանն արգելել է մտնել սրահ՝ «եկել ես որ վատ բա՞ն գրես».- ասելով: Այս մասին տեղեկացրել է «Հրապարակը» մայիսի 26-ի համարում:

Մայիսի 27-ին ՍԻՄ «Ազդակ» ակումբի կազմակերպած ասուլիսին ներս չեն թողել «Հրապարակի» թղթակից Համբարձում Համբարձումյանին: Ասուլիսի հյուրերն էին գրողներ Հովհաննես Գրիգորյանը եւ Ռուբեն Հովսեփյանը, թեման՝ մեկ այլ գրողի՝ Լեւոն Ջավախյանի ստացած ադրբեջանական գրական մրցանակն էր եւ ՀԳՄ-ում կայացած թուրք մի գրողի գրքի շնորհանդեսը:

Մայիսի 31-ին ՀՀ Ազգային ժողովում գումարվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդի առաջին արտագնա նիստը, որը լուսաբանելու հնարավորություն, սակայն, տրվել է միայն

հեռուստաընկերություններին և որոշ կայքերի: ԱԺ-ում հավատարմագրված զանգվածային մյուս լրատվամիջոցների թղթակիցներին այդպես էլ թույլ չտվեցին մուտք գործել խորհրդարանի շենք՝ տեղեկացնելով, որ անվտանգության ծառայությանը ցուցակ է տրվել, որտեղ ԱԺ-ում հավատարմագրված ոչ բոլոր լրագրողների անուններն են առկա:

Մայիսի 31-ին ՀՀ վարչական դատարանը (Էջմիածնի նստավայր), նույն գործը երկրորդ անգամ քննելով, ի վերջո բավարարեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի: Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել ԻԱԿ-ի հարցմանը ոչ պատշաճ պատասխանելուն ուղղված Փարաքարի գյուղապետարանի գործողությունները, ինչպես նաեւ պարտավորեցնել գյուղապետարանին տրամադրել հարցման պատասխանը: Հիշեցնենք, որ ՀՀ վարչական դատարանը մերժել էր ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի: ԻԱԿ-ը բողոքարկել էր դատարանի կայացրած վճիռը: 2010թ. մարտի 12-ին ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել էր վարչական դատարանի վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Հունիսի 1-ին ՀՀ վարչական դատարանը (Գյումրու նստավայր) հրապարակեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնը եւ "Առավոտ" օրաթերթն ընդդեմ Շիրակի մարզպետարանի դատական գործով վճիռը: Հայցվորները որոշեցին հաշտություն կնքել մարզպետարանի հետ: Հիշեցնենք, որ «Առավոտ» օրաթերթը 2009 թվականի օգոստոսի 19-ին Շիրակի նախկին մարզպետ Լիդա Նանյանին էլեկտրոնային փոստի հասցեով տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել, որը մնացել էր անպատասխան: Մարզպետարանի հավաստմամբ՝ իրենք հարցումը չեն ստացել, քանի որ առկա է եղել տեխնիկական խնդիր: Մարզպետարանը պատրաստակամություն հայտնեց տրամադրել պահաջվող ողջ տեղեկատվությունը, որի հիման վրա էլ կնքվեց հաշտություն:

Հունիսի 3-ին ՀՀ վճռաբեկ դատարանը ամբողջությամբ բավարարեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի վճռաբեկ բողոքը՝ բեկանելով «ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի» գործով ՀՀ վարչական դատարանի կայացրած վճիռը եւ գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության: Հիշեցնենք, որ ԻԱԿ-ը վարչական դատարանից խնդրել էր ոչ իրավաչափ ճանաչել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի այն գործողությունները կամ անգործությունը, որով սպառիչ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: ՀՀ վարչական դատարանը մերժել էր ԻԱԿ-ի հայցը:

Հունիսի 16-ին ՀՀ վարչական դատարանի Գյումրու նստավայրում ավարտվեց «Լեւոն Բարսեղյանն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի՝ «Տեղեկատվությունը տրամադրել պարտադրելու պահանջի մասին» գործի քննությունը: 2010 թվի հունվարի 18-ի եւ 29-ի հարցումներով Լ.Բարսեղյանը խնդրել էր իրեն տրամադրել տեղեկություններ՝ 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականներին Շիրակի մարզպետարանի՝ «Այլ նպաստներ բյուջեից» եւ «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածներով կատարված ծախսերի մասին: Մարզպետարանը, Լ.Բարսեղյանի հարցմանը պատասխանելիս, տեղեկությունների չտրամադրումը փորձել էր պատճառաբանել նրանով, թե «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարների մասին տեղեկությունները անձնական գաղտնիքներ են պարունակում, իսկ «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածին վերաբերող տվյալները առեւտրային գաղտնիքներ են: Շիրակի նոր մարզպետ Աշոտ Գիզիրյանը համաձայնեց հաշտություն կնքել, եւ հունիսի 16-ին այն կայացավ: Ըստ համաձայնագրի, Շիրակի

մարզպետն ափսոսանք է հայտնում Լեւոն Բարսեղյանի՝ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման կապակցությամբ կրած անհարմարության համար եւ պարտավորվում է մինչեւ 2010 թվի հուլիսի 1-ը տրամադրել հարցված տեղեկությունները, իսկ Լեւոն Բարսեղյանը հրաժարվում է գործով հետագա դատական գանգատներից եւ բողոքարկումներից:

Լրատվամիջոցների գործունեությանն առնչվող այլ իրադարձություններ

Մայիսի 11-ին «Առավոտ» օրաթերթը տեղեկացրեց, որ ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությամբ ձեւավորվել է աշխատանքային խումբ՝ ուսումնասիրելու լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու, ինչպես նաեւ նրանց նկատմամբ այլ բնույթի ոտնձգություններ կատարելու վերաբերյալ 2008-2010 թվականներին նախապատրաստված նյութերը եւ քննված քրեական գործերը, դրանցով կայացված որոշումների օրինականությունը: Աշխատանքային խումբն արդեն պահանջել է բոլոր ստորաբաժանումներից լրագրողներին վերաբերող քրեական գործերի մասին սպառիչ տեղեկատվություն տրամադրել:

Զեկույցը պատրաստվել է Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տվյալների, Երեւանի մամուլի ակումբի էլեկտրոնային տեղեկագրի եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ինտերնետային կայքի նյութերի, ինչպես նաեւ՝ մամուլի հրապարակումների հիման վրա: